**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 2**

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Ասքմեդ» ՍՊԸ-ի միջև 2025թ. նոյեմբերի 24-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 ծածկագրով հեղինակային հսկողության իրականացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «11» 03 **2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ասքմեդ» ՍՊԸ**-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն **Հ. Կարապետյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **2025թ. նոյեմբերի 24-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 ծածկագրով «ՀՀ Վայոց Ձորի մարզի ք.Վայքի վարժարանի (Վայքի N2 ավագ դպրոց) վերանորոգում», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների** պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.9 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված թիվ 2-ը՝ **«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրի ընթացքում հեղինակային հսկողության իրականացման ծառայությունների մատուցման** մասով շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի 1-ի:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** | **“Ասքմեդ» ՍՊԸ** |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Սայաթ-Նովա 25 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 01513699 |
| Հաշվեհամար 2 Հ/Հ՝ 900011060713 | Հ/Հ՝ 2050022105861001 |
| Հաշվեհամար 3 Հ/Հ՝ 900011060762 | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ |
| Կենտրոնական աշխատակազմի Գործադիր տնօրեն Ս. Բաղինյան | Տնօրեն՝ Հ.Կարապետյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
**նոյեմբերի 24-ին**
**N « ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 »** ծածկագրով
ծառայությունների մատուցման պայմանագրի
« 11 »_____03_____ 2026թ.
կնքված Համաձայնագիր 2-ի

Հավելված N 2
**նոյեմբերի 24-ին**
**N « ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 »** ծածկագրով
ծառայությունների մատուցման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | ԳՄԱ ծածկագիրը՝ (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | **98111140/49** | «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն | - | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 | 1166 916 |
| 3 | **98111140/50** | «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի վերանորոգում»աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն | - | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 | 682 453 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ***
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Չափաբաժին 2 Հ/Հ՝ 900011060713
Չափաբաժին 3 Հ/Հ՝ 900011060762

Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Վ. Բաղդյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**“Ասքմեդ» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Սայաթ-Նովա 25

ՀՎՀՀ՝ 01513699
Հ/Հ՝ 2050022105861001
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝
Հ.Կարապետյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ